ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության արդյունքների (2015-2016 ուստարի)

Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի կրթական համակարգի ներկա զարգացումներում առաջնակարգ նշանակություն է ստացել ցանկացած կրթական մակարդակի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիք-գնահատականները: Դա պայմանավորված է ինչպես վերջին տասնամյակների արմատական սոցիալ-տնտեսական բարեփոխումներով, մրցակցային շուկայական կյանքին բնորոշ հակասություններով ու պահանջներով, այնպես էլ կրթական համակարգի նորովի մրցակցայնացմամբ ու միջազգայնացմամբ: Ի տարբերություն նախորդ կրթական համակարգի, որտեղ գրեթե միանշանակ պլանավորված էր շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հարցը, մեր ժամանակներում գործնականում այն իրենց իսկ՝ շրջանավարտների ու գործատուների «անձնական գործն» է: Այդ իսկ պատճառով, մասնավորաբար, բուհ-գործատու կապի նորովի ամրապնդումն ու զարգացումը ուսումնական հաստատության գոյատևման ու զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է: Այդ կապին է վերաբերում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնի կողմից շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում վերջին տարիներին անցկացվող պարբերական հարցումները: Վերջին հարցումն անց է կացվել 2016 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին, որտեղ 44 արտաքին շահակիցներ (նրանցից 24-ը՝ առցանց) պատասխանել են համապատասխան հարցաշարի հարցերին: Հարցաշարում, 5-բալանի սանդղակի օգնությամբ գնահատվել են մասնաճյուղի շրջանավարտների տեսա-գործնական գիտելիքներն ու հմտությունները, կազմակերպչական, ստեղծագործական ու հաղորդակցման կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման մշակույթը և այլն:

Բերենք հարցման որոշ արդյունքներն ու դրանց վերլուծությունը:

Դասակարգելով ստացված տվյալները տեսնում ենք, որ արտաքին շահակիցները հատկապես բարձր են գնահատել մասնաճյուղի շրջանավարտների **մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները.**

Թիվ	Շրջանավարտների.	Միջ. գնահ.	Գնահատական					Միջ.գնահ.
			5	4	3	2	1	(%)
1	մասնագիտական պատրաստվածությունը	3,86	7	26	10	0	1	77,3%
2	տեսական գիտելիքների իմացությունը	3,77	9	22	8	4	1	75,5%
3	գործնական հմտությունները	3,70	6	23	12	2	1	74,1%
10	մասնագիտական խոսքը	3,64	9	20	6	8	1	72,7%

մասնավորապես նախորդ տարիների հետ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք միշտ բավարարված են մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունից և տեսական գիտելիքների իմացությունից: Ընդ որում՝ եթե նախկինում տեսական գիտելիքների իմացությունն ավելի բարձր գնահատականների է արժանացել, ապա այժմ, մասնաճյուղում կրթության որակի բարելավմանն ուղղված իրականացված գործընթացների արդյունքում բարձրացել է նաև շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը, որը չի վրիպել գործատուների աչքից: Նրանք ընդգծել են նաև առաջընթացը շրջանավարտների գործնական հմտություններում և մասնագիտական խոսքում.



ինչպես նաև գրանցել են առաջընթացը շրջանավարտների ինքնազարգացման և ինքնակատարելագործման ուղղությամբ:



Քանի որ մասնաճյուղը, բացի գիտելիք տալուց ունի նաև մեկ այլ առաքելություն՝ դաստիարակել և ձևավորել ընդհանրական կարողություններով ժամանակակից անհատ և ստեղծագործ անձ, ապա կարևորում է իր արտաքին շահակիցների կարծիքը շրջանավարտների մասնագիտական և ընդհանրական կարողությունների վերաբերյալ: Եվ հարկ է նշել, որ գործատուներն արտահայտել են իրենց բավարարվածությունը

մասնագիտական գործընթացի նկատմամբ նրանց ստեղծագործական մոտեցումներից և նրա առաջընթացից:



2015-16 ուստարվա հարցման արդյունքներով արտաքին շահակիցները բարձր են գնահատել նաև շրջանավարտների աշխատանքային կարողություններն ու անձնային-բարոյական որակները, մասնավորապես, **աշխատանքային պատասխանատվությունը** /38-ը բարձր և շատ բարձր, 3-ը՝ բավարար/, **թիմային աշխատանք կատարելու ունակությունը** /37-ը բարձր և շատ բարձր, 4-ը՝ բավարար/, **գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները** /33-ը բարձր և շատ բարձր, 7-ը՝ բավարար/, **վարվեցողության կանոններին ու էթիկայի նորմերին հետևելը** /32-ը բարձր և շատ բարձր, 8-ը՝ բավարար/.

Թիվ	Շրջանավարտների.	Միջ. գնահ.	Գնահատական					Միջ. գն.
			5	4	3	2	1	(%)
5	կազմակերպչական կարողությունները	3,91	16	15	7	5	1	78,2%
12	աշխատանքային պատասխանատվությունը	4,11	15	23	3	2	1	82,3%
13	թիմային աշխատանք կատարելու ունակությունները	4,11	16	21	4	2	1	82,3%
14	գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները	3,91	13	20	7	2	2	78,2%
11	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	3,93	16	16	8	1	3	78,6%

Ընդհանուր բարձր գնահատականների ֆոնին ուշադրության են արժանի շրջանավարտների **մասնագիտական խոսքի** /9-ը ցածր գնահատական/, **խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու** /9-ը ցածր գնահատական/, **տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու** /8-ը ցածր գնահատական/, **ինչպես նաև հաղորդակցվելու կարողությունների** /7-ը ցածր գնահատական/ գնահատականները: Սրանք

թերևս հենց այն որակներն են, որոնք թելադրված են և պահանջարկված հայաստանյան տնտեսա-քաղաքական ու կրթական նոր իրողությունների կողմից, ինչն արձագանք է գտել արտաքին շահակիցներից 6-ից կամ 5-ից մեկի գնահատումներում: Կարծում ենք, այս գործոններն են ազդել նաև այն 6 շահակցի տպավորության վրա, որոնք իրենց կազմակերպությունում և տարածաշրջանում ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը բարձր չեն համարել այն դեպքում, երբ **30-ը շատ բարձր ու 10-ը բարձր են գնահատել իրենց կազմակերպությունում մասնաճյուղի հեղինակությունը**, **իսկ տարածաշրջանում այդ թվերը կազմել են 25 և 13՝ համապատասխանաբար**: Իսկ վերջին 3 տարիների համար դրանք հետևյալն են.



Սույն համատեքստում անդրադառնանք **արտաքին շահակիցների կարծիքներին**, կապված այն հարցերի հետ, թե մասնաճյուղի շրջանավարտները որքանո՞վ են աշխատաշուկայում մրցունակ, իրենք ո՞ր որակներն են հատկապես կարևորում աշխատանքի ընդունելիս, այդ առնչությամբ ի՞նչ առավելություններ ունեն մասնաճյուղի շրջանավարտները և նրանց մասնագիտական ու մանկավարժական ի՞նչ որակներ կցանկանային, որ կրթության ընթացքում բարելավվեին:

Այն բաց հարցին, թե ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները որքանո՞վ են մրցունակ աշխատանքի շուկայում, 44 շահակցից պատասխանել են 38-ը: Դրանցում կան հակադիր և, ինչ որ իմաստով, գնահատման տեսանկյունից անորոշ, խուսափողական կարծիքներ: Օրինակ, «Քանի որ տարածաշրջանում միակն է, դա արդեն մրցակցությունից դուրս է», «Տարբեր շրջանավարտներ տարբեր կերպ են ներկայանում», «Ժամանակակից աշխատանքային շուկան շատ բարդ է և դժվար, գեղարվեստի ասպարեզում առավել ևս, հարկավոր է մեծ ունակություն և բարձր տվյալներ» և այլն:

Կարող ենք ասել, որ հարցը համարժեքորեն ընկալող արտաքին շահակիցների գերակշիռ մեծամասնությունը՝ 27, ձևավորված համապատասխան աշխատաշուկայի պայմաններում մասնաճյուղի շրջանավարտներին համարում է մրցունակ: Միաժամանակ այս տվյալներից կարող ենք անել հետևություն, որ տվյալ ասպարեզում վիճակն էլ ավելի բարելավելու ռեսուրսները սպառված չեն: Մասնավորաբար, վերոնշյալ հատկանիշների՝ շրջանավարտների մասնագիտական խոսքի, հաղորդակցվելու կարողությունների կատարելագործման, խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ

ուղիներ փնտրելու, տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու հարցերում գործատուների գնահատականները մնացած որակների համեմատ պակաս էին: Հատկանշական է, որ 39 պատասխանողներից 18 արտաքին շահակից, ինքնուրույն ու տարբեր ձևակերպումներով, տվյալ որակները կարևորել է, որպես աշխատանքի ընդունելու պայման: Այն հարցին, թե մասնագիտական ու մանկավարժական ի՞նչ որակներ կցանկանայիք ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մոտ բարելավվեր, 34 պատասխաններից 12-ում այս կամ այն կերպ շոշափել են նույն հատկանիշները: Եվ հակառակը, 4-5 պատասխաններում է, որ հաղորդակցվելու կարողությունները, ոչ ստանդարտ մտածելակերպը, մտածողության ճկունությունը, թիմային աշխատանքի ունակությունը նշվել են որպես շրջանավարտների առավելություն: Իսկ սերը մասնագիտության ու երեխաների հանդեպ, պատասխանատվությունը, մոտիվացվածությունը, տեսական գիտելիքները, վարվեցողությունը, աշխատասիրությունը, համեստությունը, հարգանքը դասախոսների հանդեպ, ազնվությունը, կազմակերպվածությունը նշված են 36 պատասխաններից 15 պատասխաններում որպես մասնաճյուղի շրջանավարտների առավելություններ: Որակներ, որոնք համեմատաբար ավելի բարձր էին գնահատվել նաև 5-բալանի սանդղակով ընդհանուր գնահատականներում: Այստեղից կարելի է անել այն հետևությունը, թե ներկայումս մասնաճյուղում իրագործվող կրթական ծրագրերի բարեփոխումների համատեքստում հարկ է համապատասխան ուշադրություն դարձնել ուսումնառության ընթացքում ուսանողների բարոյա-հոգեբանական կաշկանդվածությունը հաղթահարելու, նրանց սոցիալ-հոգեբանական ակտիվությունը խթանելու, գործունեության ընթացքում համատեղ աշխատանքային կյանքի օրինաչափությունների իմացության հիման վրա ավելի նախաձեռնող ու հմուտ դառնալու հարցերին:

Հարցման մեջ արտաքին շահակիցները նշել են նաև այն մասնագիտությունները, որոնց կարիքը մարզում կա: Ամենաշատ պատասխանները ստացվել են հետևյալ մասնագիտությունների գծով. դասվար-մանկավարժ՝ 7, իրավագիտություն՝ 6, ռուսաց լեզվի ուսուցիչ՝ 4, նախնական ռազմական պատրաստության ուսուցիչ՝ 3, տեխնոլոգիայի ուսուցիչ՝ 2, աշխարհագրություն՝ 2:

Եղել են նաև առաջարկներ մեկական պատասխանների տեսքով հետևյալ մասնագիտությունների համար՝ տեղեկատվական կառավարման համակարգեր, գրադարանավար, կենսաբանություն, զբոսաշրջություն, սոցիալական աշխատանք, ֆիզիկա, քիմիա, հաշվապահություն, ֆինանսներ, աստվածաբանություն:

Արտաքին շահակիցների առաջարկությունների մեջ թերևս ուշադրության են արժանի հետևյալները.

- մասնաճյուղում վերականգնել (կամ բացել) մագիստրոսական ուսուցումը, քանի որ բոլոր կարող ուժերը հնարավորություն չունեն կրթությունը շարունակել Երևանում,

- Իջևանում նույնպես ներմուծել հեռահար ուսուցման ինստիտուտը,

- Փոխադարձ ցանկությամբ ուսանողներին հնարավորություն ընձեռել ուսմանը զուգահեռ անվճար աշխատել ավագ դպրոցում,

- Ավելի մեծ ուշադրություն դարձնել բնագիտա-մաթեմատիկական առարկաներին,

-Բարելավել տարբեր իրավիճակներում ուսանողների արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները

- Ավելի շատ ժամանակ հատկացնել պրակտիկային և ֆինանսներ տրամադրել ընդունող հիմնարկներին, որպեսզի ավելի մեծ ուշադրություն դարձնեն պրակտիկանտներին,

-Կիրառական արվեստի ֆակուլտետում հարկավոր է կոնկրետացնել մասնագիտության տեսակը, կերպարվեստի տարբեր տեսակները գայթակղող են, բայց բարձր մակարդակ դժվար է ապահովել, հարկավոր է ունենալ հիմնական տեսակ՝ մեկ կամ երկու հատ,

- Առավել սերտ և արդյունավետ դարձնել մասնաճյուղի կապերը զանազան կազմակերպությունների հետ և այլն:

Ընդհանրացնելով ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ արտաքին 44 շահակիցների կարծիքները, կարող ենք ասել, որ.

- Գերակշիռ մեծամասնությունը շատ բարձր են գնահատում իրենց կազմակերպությունում և տարածաշրջանում մասնաճյուղի հեղինակությունը;
- Մասնագիտական և անձնային գնահատականների ընդհանուր բարձր ֆոնին արտաքին շահակիցները հատկապես բարձր են գնահատում շրջանավարտների տեսա-գործնական գիտելիքները, աշխատանքային պատասխանատվությունը, համատեղ աշխատանքում բարյացակամությունն ու փոխօգնությունը, էթիկական վարքը, ստեղծագործական մոտեցումները, քննադատական-վերլուծական, կազմակերպչական կարողությունները;
- նույն կարգի գնահատականների ֆոնին ավելի ցածր գնահատական են ստացել շրջանավարտների մասնագիտական խոսքը, խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու, տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու, ինչպես նաև հաղորդակցվելու կարողությունները: Նման գնահատականները, որպես շահակիցների տեսակետ և կողմնորոշում ամրապնդվել է աշխատանքի ընդունելիս թեկնածուների որակների գերակայություններում, շրջանավարտների առանձին որակների բարելավում պահանջող ցանկություններում:

Ելնելով վերոնշյալից առաջարկվում է.

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի դասախոսական և ուսանողական հանրությանը, քննության առարկա դարձնելով կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների կարծիք-գնահատականները հաշվի առնելու հնարավորությունները;

- Ուսումնա-մեթոդական վարչության, համապատասխան մասնագիտությունների պատասխանատուների հետ քննարկել կրթական ծրագրերում **«Գործարար հաղորդակցություն»** առարկայի ներմուծման հնարավորությունը (կամ որպես հումանիտար առարկաների առարկայական ծրագրի բաղադրատարր, կամ հիմնականում նրանց որոշ դասաժամերի հաշվին առանձին առարկայի տեսքով) այնպես, որ տվյալ ներմուծումը պարունակի այն գիտելիքների ու հմտությունների մատուցումը, որոնք զարգացնելու են շուկայական-մրցակցային կյանքի պահանջներին համապատասխան վերոնշյալ որակները:

Կից ներկայացված են հարցման ամբողջ արդյունքները և նրանց համեմատական տվյալները նախորդ 3 ուստարիների համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին